տարին ստորագրեցին Կատարինէ Բ. կայսրուհին Ռուսաց և Համիտ սուլտանն Թուրքաց, Ղրիմ ինքնագլուխ և անկախ իշխանութիւն հրատարակուեցաւ: Այս դէպքս Թաթարաց իշխանութեան կործանման նախադուռն եղաւ, ինչպէս նաև Ղրիմու քրիստոնէից գաղթելուն սկզբնապատճառ:

Ռուսաստան երկար ժամանակէ 'ի վեր աչք ունէր այն ծովապատ և քաջաբեր աշխարհին վրայ, որոյ տիրողք 1240–1389 իրենց իշխանութեան տակ առել էին Ռուս Մոսկուայի նախարարները՝ որոց հարկատիր լուծը հազիւ 1481 ին կարող եղել էր վերցնել իւր ազգէն Իւան Գ. սակայն և այնպէս Ղրիմեցի Թաթարք, մինչև ցԺԶ դար, ըստ կամաց կամ աղիկամի յարձակմամբ միշտ նեղութիւն էին դրացի ազգաց Ռուսաց և Լեհաց: Ռուս քաղաքականութիւնը որոշեց որ տիրելով Թաթարաց աշխարհին, ապահովէ իւր սահմանը, որ մինչև ցծով պիտի հասնէր, որով և Եւրոպայի հետ 'ի հարաւոյ ևս անընդմէջ յարաբերութիւն պիտի ունենար:

1774 ին յաղթութիւնը Ռուսաց կողմը լինելով, տէրութիւնը առաջարկեց Բարձրագոյն Դրան իրեն նպաստաւոր դաշնադրութիւն, որ ակամայ ընդունելի եղաւ Թուրքաց[1]: Դաշանցս զօրութեամբ տիրանալով Ռուսք Կերչի, Ենի–Գալէի, Ազովի և Քիմպուրունի, և տակաւ առաջ վարելով առաջարկեցին Թաթարաց իրենց զօրաւոր պաշտպանութիւնը ընդդէմ Օսմանեանց:

1. Այս այլ և այլ յիշատակաց տեղեկութիւնք մասամբ կը համառօտեմք Փ. Խառթախայի Քէօփրիւլիւ—Բէյէն է Ղրիմ կոչուած պրակէն որ հրատարակուած է ի Սիմֆերոպոլ, 1864 ին: